

Յերակլ, ո՛ւմ կը սպասեր նստած իւր թագաւոր եալ քաղաքին մէջ, մի թէ առաջի օրէն պետք չէ՞ր, որ արթննար թմրութենէն. ո՛չ, այն քաջը չէ, որ մենք տեսանք երբեմն այս Յայաստանի մէջ, երբ կը յարձակեր պարսից վրայ, եւ նոցայ բանակներն կը խորտակեր: Ո՛չ, այլ նստած անհիմնալի կրօնական վեճերու մէջ կը մտնէ, ինչպէս երբեմն մեզի նաեւ օրինակը տուաւ Կարին: Չարմանք չէ, որ ինք կայսր՝ եւ զինուոր երբ պատերազմէ կը փախչի, յաղթութիւնն էլ իրմէ կը փախչի: Փոխանակ կենաց փայտը մէկ ձեռքը եւ սուրը միւսին առնելով պատերազմելու անհաւատից դէմ, սուրբ խաչը առէր Կոստանդնուպոլիս փախեր է, եւ ս. քաղաքը Երուսաղէմ մահմեդականաց ձեռք է մատնուէր:

Այս խօսքերը երբ կ'ըսեր Թեոդորոս՝ դարձեալ աչքերը կրակի պէս կը փայլէին, եւ Երուսաղէմի ընկնիլը լսելով՝ ամենը սոսկմամբ իրարու կը նայէին, եւ Ներսէս աւելի շփոթած՝

– Բայց միթէ՞ այդ լուրն ստոյգ է,– հարցուց,– վասնզի ես երբ Կոստանդնուպոլիս թողի, Եւրոպա եւ Ասիա սաստիկ զօրաժողով կը լինէր եւ կայսրը անձամբ գնացեր էր Ասորիք:

– Կայսրը գնացեր էր Աստիոք, աստուածաբանութիւն ընելու է զբաղէր, իր զօրքերը պատերազմէր են եւ յաղթուէր, եւ արաբացիք Երուսաղէմի տէրեր եւ բոլոր Ասորիք արեան ծով են դարձուցեր: Ահա ինչ որ Կեսարիայի մասնաւոր սուրհանդակաւ նամակ մը կիմացնէ: Քու ինձ Թեոդորոս Երիզացիէ բերածդ չորս ամսուան նամակ է:

– Այո, մենք ծովուն վրայ հակառակ քամիներով շատ ուշացանք մինչեւ Տրապիզոն:

Բագրատունի պառաւ Տիկինը՝ այս վերջի խօսքերուն խոր լռութիւն մը կը պահէր անշարժ արձանի պէս: Եւ երբ ամենքն էլ լռեցին, վառարանին ճարճատիւնը միայն կը լսուէր եւ ձիւնախառն փոթորկին ձայնը: Սարգիս իշխանը, որ մինչեւ վերջ բերանը չէր բացեր, ոտք ելաւ հրաժարականը տալու. Ներսէս նորա օրինակին հետեւեցաւ:

– Սարգիս իշխան,– ըսաւ Տիկինը,– եթէ այս երեկոյ ընթրիքը մեզ հետ միատեղ ընէք ձեր սպային հետ, մեզ շատ գոհ կ'ընէք:

Սարգիս ընդունեցաւ խոնարհաբար Տիկնոջ հրաւերքը, եւ Տիկինն ու Թեոդորոս միակ մնացին: Համասպրուհի ոտք ելաւ, եւ թեպէտ եօթանասունն անցեալ եւ գեղեցկութիւնը խամը եալ, բայց վսեմութիւն միշտ կար իւր կերպարանաց եւ